Սերգեյ Դովլաթով

Հոբելյանական տղան

Տալլինը փոքր քաղաք է, մտերմիկ: Փողոցում հանդիպում ես ծանոթիդ ու լսում. «Ողջո՛ւյն, ես էլ քեզ էի ման գալիս»: Ասես հիմնարկի ճաշարանում եք… Կարճ ասած, ապշեցի՝ իմանալով, թե Տալլինը քանի բնակիչ ունի:

Բանն այսպես եղավ: Տուրոնոկը կանչեց ու ասում է.

– Մի կառուցողական գաղափար կա: Կարող է տպավորիչ ռեպորտաժ ստացվել: Քննարկենք մանրամասները: Միայն թե՝ առանց կոպտելու…

– Ի՞նչ կոպտել… Անիմաստ բան է…

– Ճիշտն ասած, արդեն կոպտեցիք,- խոժոռվեց Տուրոնոկը,- շարունակ կոպտում եք, Դովլա՛թով: Կոպտում եք նույնիսկ ընդհանուր ժողովներին: Չեք կոպտում միայն, երբ երկար ժամանակով բացակայում եք… Ձեր կարծիքով՝ այդքան անդե՞մ եմ: Մի օր եկեք, կտեսնեք գրադարանս: Ի դեպ, նախահեղափոխական հրատարակություններ էլ կան…

– Ինչի՞ համար եք կանչել,- հարցնում եմ:

Տուրոնոկը լռեց: Կտրուկ ուղղվեց՝ ասես քնարական կեցվածքը փոխելով գործնականի: Խոսեց վստահ ու ընկալելի.

– Մի շաբաթից Տալլինի ազատագրման տարեդարձն է: Տոնը լայնորեն է նշվում: Այդ թվում և թերթի էջերում: Նախատեսված են տարբեր ուղղություններ՝ տնտեսական, մշակութային, կենցաղային… Խմբագրության բոլոր բաժինները նյութեր են պատրաստում: Դուք էլ առաջադրանք ունեք: Ի մասնավորի. վիճակագրական բյուրոյի տվյալներով՝ քաղաքը մոտ չորս հարյուր հազար բնակիչ ունի: Այդ թիվը որոշ առումով պայմանական է: Քանի որ փոքր-ինչ պայմանական է նաև քաղաքի շրջագիծը: Եվ ահա: Մենք խորհրդակցեցինք ու որոշեցինք: Տալլինի չորս հարյուր հազարերորդ բնակիչը պետք է ծնվի

հոբելյանի նախօրեին:
– Այնքան էլ չեմ հասկանում…
– Գնացեք ծննդատուն: Սպասեք առաջին նորածնին: Գրանցեք տվյալները: Հարցուփորձ արեք երջանիկ ծնողներին: Հարցազրույց վերցրեք ծնունդն ընդունած բժշկից: Բնականաբար՝ լուսանկարներ արեք: Ռեպորտաժը գնում է հոբելյանական համար: Հոնորարը,- գիտեմ՝ ձեզ համար անկարևոր չէ,- կրկնակի:
– Դրանից էլ պիտի սկսեիք:
– Նյութապաշտությունը ձեր տհաճ գծերից է,- ասաց Տուրոնոկը:
– Պարտքե՛ր- ասում եմ,- ալիմենտնե՛ր…
– Շատ եք խմում:
– Էդ էլ պատահում:
– Կարճ ասած: Ընդհանուր իմաստն այս է: Երջանիկ մարդ է ծնվել: Նույնիսկ այսպես կարտրահայտվեի. մարդ՝ դատապարտված երջանկության:
Այդ տխմար արտահայտությունն այնքան դուր եկավ խմբագրին, որ երկու անգամ կրկնեց:
– Մարդ՝ դատապարտված երջանկության: Իմ կարծիքով՝ վատ չէ: Գուցե որպես վերնագի՞ր փորձենք: «Մարդ՝ դատապարտված երջանկության»:
– Նայենք ոնց կստացվի,- ասում եմ:
– Եվ հիշեք,- խոսակցությունն ավարտելով՝ վեր կացավ Տուրոնոկը,- նորածինը պետք է հրապարակելի լինի:
– Այսի՞նքն:
– Այսինքն՝ լիարժեք: Ոչ մի արատավոր, մռայլ բան: Ոչ մի կեսարյան հատում: Ոչ մի միայնակ մայր: Ծնողների ամբողջական լրակազմ: Առողջ, սոցիալապես լիարժեք տղա:
– Անպայման տղա՞:
– Այո՛, տղան մի տեսակ խորհրդանշական է:
– Հենրի՛խ Ֆրանցևիչ, ինչ վերաբերում է լուսանկարներին… Նկատի ունեցեք, որ նորածինները մի տեսակ էնքան էլ…
– Ընտրեք լավագույնին: Կարող եք սպասել, ժամանակ կա:
– Չորս ամիս պիտի սպասենք: Մինչև էդ դժվար մարդու նման լինի: Կան, որ հիսուն տարին էլ է քչություն անում…
– Լսե՛ք,- բարկացավ Տուրոնոկը,- դեմագոգիա մի՛ արեք: Ձեզ առաջադրանք է

տրվել: Չորեքշաբթի նյութը պետք է պատրաստ լինի: Պրոֆեսիոնալ լրագրող եք: Ինչո՞ւ եք ժամանակ վատնում…
Իսկապես, մտածում եմ, ինչո՞ւ:

Իջա բար, ջին պատվիրեցի: Նայեմ՝ նստած է, ոչ այնքան սթափ, ֆոտոթղթակից Ժբանկովը: Ձեռքով արեցի: Մոտեցավ՝ օղու գավաթը ձեռքին: Կիսեց բուտերբրոդս:
– Գուցե տո՞ւն գնայիր,- ասում եմ,- գրասենյակը լիքը ղեկավարություն է…
Ժբանկովը դատարկեց գավաթն ու ասաց.
– Հասկանո՞ւմ ես, մաքուր խայտառակ էղա: Նկարածս տեսե՞լ ես Ֆեղյայի ակնարկում:
– Ես թերթ չեմ կարդում:
– Ֆեղյան «Էստոնիայի երիտասարդությունում» ակնարկ էր տպել: Ավելի ճիշտ՝ ճեպանկար. «Երեքն ընդդեմ մրրիկի»: Ջրասուզակների մասին: Թե ոնց են, իմացար, ջրասույզ եղած թանկարժեք բեռը որոնում: Մրրիկն էլ մոտենում է: Ու՝ իմ արած լուսանկարը: Էրկու հոգի նստած են գերանին: Ու ջրից ցցվել է փողրակը: Այսինքն՝ իրանց ընկերը ջրի տակ բնբնում է: Մի խոսքով, նկարեցի պրծա, վեցնոցը կպցրի ու մոռացա: Մի անգամ գնում եմ նավահանգիստ, տեսնեմ՝ մարդիկ ծիծաղից մեռնում են: Էս ի՞նչ բան է՝ մտածում եմ: Ու պարզվում է էսպիսի պատմություն: Էնտեղ օժանդակ արտադրամասի մի պետ ունեն՝ Միրոնենկոն: Մի անգամ դուրս է գալիս ճաշարանից՝ երրորդ կառանատեղի մոտ ծխելու: Ծխում-պրծնում, շպրտում է քնթուկը: Խխում է, ներողություն արտահայտությանս: Ու լրիվ դուրս թքում ատամները: Պարզ է՝ դնովի: Դրանք էլ ոսկուց են: Ութ հարյուր, մի բան էլ ավել կարժենան: Վազում է սուզակների մոտ. «Տղե՛րք, օգնե՛ք»: Սրանք միանգամից գլխի են ընկնում. «Գործը պրծանք՝ կգտնենք»:- «Պարտքի տակ չեմ մնա»:- «Քեզանից՝ մարդա մի շիշ»: -«Պայմանավորվեցի՛նք…»…
Սուզակները գործը պրծան, սկսեցին փնտրել: Ու էստեղ հայտնվում է Ֆեղկան, հանձնարարությունը կատարել՝ հետ է գալիս: Նայում է, թե՝ էս ի՞նչ բանի եք: Նյութ է կոճում, իմացա՛ր: Տղերքն էլ ոնց որ թե անհարմար են զգում. հե՛չ, ասում են, թանկարժեք բեռ է սկել: Ֆեղյան էլ, բանից անտեղյակ. «Անունդ ի՞նչ է, անունդ ի՞նչ է…»: Տղերքը տեղը տեղին պատասխանում են: «Ինչո՞վ եք զբաղվում հազվագյուտ ազատ ժամերին»… Երաժշտությամբ ենք զբաղվում՝

ասում են, գեղանկարչությամբ, խմբակային, բո՛զը, երգեցողությամբ… «Բա ինչի՞ եք էս ուշ ժամին աշխատում»… Մրրիկ է սկսվում, ասում են, վռազում ենք…

…Ֆեդյան զանգեց ինձ՝ խմբագրություն: Եկա, նկարեցի, առանց խորանալու… Ցավն էն է, որ ներքին էլ ավազան է, արհեստակա՛ն: Ի՛նչ մրրիկ, ի՛նչ բան…

– Տո՛ւն գնայիր,- ասում եմ:

– Սպասի, էդ էլ չի ամենակարևորը: Պատմեցին, թե էդ պատմությունն ինչով է վերջացել: Սուզակները, պատկերացրու, ատամները գտնում են: Միրոնենկոն երջանիկ է, էլ տեղ չկա: Նրանց քաշ է տալիս խմելու: Օդի է պատվիրում: Խմում են: Միրոնենկոն սկսում է ատամները ցուցադրել: Շնորհակալ եմ, ասում է, տղերքը փրկեցին, գտան: Արծիվներ են, ասում է, առաջավորնե՛ր, ստախանովականնե՛ր… Էս սեղանի մոտ են ատամները շուռումուռ տալիս, էն սեղանի մոտ են նայում… Բարապանն է մոտենում… Նվագախմբի տրոմբոնիստը… Մատուցողուհիներն են գլուխներն օրորում… Իսկ Միրոնենկոն արդեն հինգերորդ շիշն է քամում սուզակների հետ… Մեկ էլ գլխի է ընկնում, որ ատամները չկան, թոցրել են: Գոռում է. «Հե՛տ տվեք, սողունն՝ե՛ր»: Բայց էլ ի՞նչ: Էստեղ սուզակներն էլ չեն օգնի…

– Լա՛վ,- ասում եմ,- գնալուս ժամանակն է…

Ծննդատուն գնալ չէի ուզում: Հիվանդանոցի մթնոլորտը ծանր եմ տանում: Հենց մենակ ֆիկուսնե՛րն ինչ ասես արժեն: Չխոսելով արդեն հախճասալե հատակների ու սպիտակ վարագույրների մասին…

Մտա բաժին՝ Մարինայի մոտ: Լսում եմ.

– Հա՛, դո՞ւ ես: Կներես, գործը խեղդում է:

– Բան է՞ պատահել:

– Ի՞նչ պիտի պատահի: Գործեր են…

– Էդ ինչ գործեր են ո՞ր…

– Հոբելյան-մոբելյան: Մենք, ախր, շարքային մահկանացուներ ենք, վեպեր չե՛նք գրում…

– Ինչի՞ ես չարանում:

– Իսկ ինչո՞վ ուրախանամ: Դու մի գլուխ անհետանում ես: Նախ՝ խելահեղ սեր, հետո՝ մի շաբաթով քաշ ես գալիս…

– Ո՞վ է քաշ գալիս: Գործուղման էի, Սաարեմայում: Հյուրանոցում լվերը կերան…

– Լվեր չեն եղել,- աչքերը կասկածոտ կկոցեց Մարինան,- կնանիք են եղել: Զզվելի, կեղտոտ պոռնիկներ: Ի՜նչ են մի գլուխ խցկվում: Ախր անփող ես միշտ, միշտ խումհարի մեջ… Զարմանում եմ՝ ո՞նց մինչև հիմա չես վարակվել…
– Լվից ի՞նչ պիտի վարակվեմ:
– Գոնե չխաբեիր: Ո՞վ էր էդ շեկ վտվտիկ լողլողը: Առավոտը ձեզ ավտոբուսից տեսա…
– Շեկ վտվտիկ լողլող չի: Մետաֆիզիկ-բանաստեղծ Վլադիմիր Կրոլն է: Սանրվածքն է էդպիսին…
Հանկարծ հասկացա՝ ուր որ է լաց կլինի: Իսկ Մարինան մոլեգին էր լալիս, դառը, հեծկլտոցով, առանց իրեն խնայելու: Ինչպես դերասանուհին՝ ներկայացումից հետո…
– Հանգստացի, խնդրում եմ: Ամեն ինչ լավ կլինի: Բոլորը գիտեն՝ ինչքան եմ կապված քեզ…
Մարինան հանեց պստլիկ վարդագույն թաշկինակը, սրբեց աչքերը: Ավելի հանգիստ խոսեց.
– Կարո՞ղ ես լուրջ լինել:
– Իհարկե:
– Վստահ չեմ: Անպատասխանատու ես, ինչպես արտույտը: Ոչ տուն, ո՛չ ունեցվածք, ո՛չ նպատակ… Ամուր կապվածություններ չունես: Ես ընդամենը պատահական կետ եմ տարածության մեջ: Ախր արդեն համարյա քառասուն տարեկան եմ: Ու պիտի՞ ինչ-որ կերպ դասավորեմ կյանքս:
– Ես էլ եմ,- ասում եմ,- համարյա քառասուն: Ավելի ճիշտ՝ երեսունն անց: Ու չեմ հասկանում՝ ի՞նչ է նշանակում՝ դասավորել սեփական կյանքը… Անպայման ուզում ես ամուսնանա՞լ: Բայց ի՞նչ կփոխվի: Ի՞նչ է տալու էդ ապուշ կնիքը: Էդ ձիու խարանը… Քանի լավ է՝ էստեղ եմ: Ձանձրացա՝ կգնամ: Ու միշտ էդպես է լինելու…
– Ամուսնանալ չեմ պատրաստվում: Համ էլ քեզանից ի՜նչ փեսացու: Ուղղակի ուզում եմ երեխա ունենամ: Հետո ուշ կլինի…
– Ունեցի՛: Մենակ թե հիշիր նրան ինչ է սպասում:
– Միշտ գույները խտացնում ես: Միլիոնավոր մարդիկ ազնվորեն ապրում ու աշխատում են: Համ էլ՝ մենակ ո՞նց ունենամ:
– Ինչի՞ մենակ: Ես… կօժանդակեմ: Ինչ վերաբերում է նյութականին՝ ինձանից երեք անգամ ավել ես ստանում: Այսինքն՝ գործնականում կախում չունես…

– Ուրիշ բան էի ասում…
Հեռախոսը զնգաց: Մարինան վերցրեց խոսափողը:
– Այո՞՛: Շատ էլ լավ է: Նա հենց ինձ մոտ է…
Թափ տվի ձեռքս: Մարինան ըմբռնումով գլխով արեց.
– Ասում եմ՝ հենց նոր էստեղ էր… Ճիշտն ասած՝ չգիտեմ: Երևի մի տեղ խմում է: Տես, է՛, լրբին:
– Քեզ Ցեխանովսկին է փնտրում: Ուզում է պարտքը տա:
– Դրա՞ն ինչ եղավ:
– Փող է ստացել գրքի համար:
– «Քարավանը ելնում է երկի՞նք»:
– Ինչի՞՝ քարավան: Գիրքը կոչվում է «Շարունակելի»:
– Մի հաշիվ է: Լա՛վ,- ասում եմ,- գնացի:
– Ո՞ւր: Եթե գաղտնիք չի:
– Պատկերացրու՝ ծննդատուն…
Նայեցի թերթախեղդ սեղաններին: Առա ծխախոտի ծխի ու սոսնձի հոտը: Այնպիսի ձանձրույթ ու դառնություն զգացի, որ նույնիսկ հիվանդանոցի մթնոլորտն արդեն վախենալու չէր:
Դռան հետևը հասկացա, որ մի վայրկյան առաջ Մարինան ճչացել էր. «Կորի գնա, ուրեմն, խոճո՛ւկ հարբեցող»:
Նստեցի ավտոբուս, որ հասնեմ Կառլ Մարքսի փողոց: Ավտոբուսում անսպասելի ննջեցի: Մի րոպե անց արթնացա գլխացավով: Հիվանդանոցի նախասրահով անցնելիս ինձ տեսա հայելու մեջ ու դեմքս շրջեցի…
Սպիտակ խալաթով մի կին էր ընդառաջ գալիս:
– Կողմնակիների մուտքն արգելված է:
– Իսկ այնկողմնայինների՞ն,- հարցնում եմ,- կարելի՞ է:
Բուժքույրը տարակուսանքով քարացավ: Ես ցույց տվի խմբագրության վկայականը: Բարձրացա երկրորդ հարկ: Սանդղավանդակում անճոռնի խալաթներով ինչ-որ կանայք էին ծխում:
– Ո՞նց գտնեմ գլխավոր բժշկին:
– Վերև, վերելակի դիմաց:
Վերելակի դիմաց՝ նշանակում է համեստ մարդ է: Վերելակի դիմաց աղմկոտ է, դռները շխկում են…
Մտնում եմ: Վաթսունամյա մի էստոնացի մարզանք է անում բաց օդանցքի

առաջ:
Էստոնացիներին միանգամից ու անսխալ եմ ճանաչում: Կերպարի մեջ՝ ոչինչ ճչան ու լայնաթափ: Անփոփոխ փողկապ ու տաբատի կոկիկ ծալք: Չընդգծված կզակ ու հանգիստ հայացք: Ասեք՝ ո՞ր ռուսը մեն-մենակ մարզանք կանի…
Ցույց եմ տալիս վկայականս: Պատասխանում է.
– Դոկտոր Միխկել Տեպպե: Նստե՛ք: Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:
Ներկայացրի գործի էությունը: Բժիշկը չզարմացավ: Ընդհանրապես, մամուլն ինչ էլ մոգոնի, շարքային ընթերցողին զարմացնելը դժվար է: Ամեն ինչի սովորել են…
– Կարծում եմ՝ բարդ բան չէ,- ասաց Տեպպեն,- հսկա կլինիկա է:
– Ձեզ բոլո՞ր նորածինների մասին են տեղեկացնում:
– Ոչ: Բայց կարող եմ հանձնարարել:
Նա վերցրեց խոսափողը: Ինչ-որ բան ասաց էստոներեն: Հետո դարձավ ինձ.
– Հետաքրքրվում եք ծնունդն ինչպե՞ս է ընթանում:
– Աստված չանի: Ընդամենը տվյալները գրեմ, տեսնեմ երեխային ու խոսեմ հոր հետ:
Բժիշկը նորից զանգեց: Ինձ ասում է.
– Մեկը հենց հիմա ծննդաբերում է: Մի քանի րոպեից կզանգեմ: Հուսամ՝ ամեն ինչ հաջող կանցնի: Առողջ մայր է… Լիքը-լիքը, շիկահեր,- շեղվեց բժիշկը:
– Իսկ դուք,- ասում եմ,- ամուսնացա՞ծ եք:
– Իհարկե:
– Երեխաներ է՞լ ունեք:
– Տղա:
– Չե՞ք մտածել՝ ինչ է սպասում նրան:
– Ի՞նչ կա մտածելու: Շատ լավ գիտեմ՝ ինչ է սպասում: Նրան սպասում է խիստ ռեժիմի ճամբարը: Խոսել եմ փաստաբանի հետ: Արդեն ստորագրություն են վերցրել չբացակայելու մասին…
Տեպպեն հստակ ու հանգիստ էր պատմում: Ասես խոսքը շարքային դրական բանի մասին լիներ: Ես մտերմաբար ու գաղտնապահորեն շշնջացի.
– Սոլդատովի գործո՞վ:
– Ի՞նչ,- չհասկացավ բժիշկը:
– Ձեր որդին էստոնական վերածննդի գործի՞չ է:
– Իմ որդին,- հատ-հատ ասաց Տեպպեն,- ֆարցովշչիկ է ու հարբեցող: Եվ նրա

համար համեմատաբար հանգիստ եմ միայն, երբ բանտում են պահում…
Լռեցինք: Բժիշկն ասում է.
– Ժամանակին կղզիներում բուժակ էի: Հետո կռվել եմ էստոնական կորպուսում: Հասել եմ բարձր դիրքի: Չգիտեմ՝ ոնց եղավ: Ես ու մայրը դրական մարդիկ ենք, տղաս՝ բացասական:
– Վատ չէր լինի՝ նրան էլ լսեինք:
– Նրան լսելն անհնար է: Ասում եմ. «Յո՛ւրա, ինչո՞ւ ես ինձ արհամարհում: Ես ամեն ինչի հասել եմ համառ աշխատանքով: Դժվար կյանք եմ ունեցել: Հիմա բարձր դիրք եմ զբաղեցնում: Քո կարծիքով՝ ինչու ինձ՝ համեստ բուժակիս, գլխավոր բժիշկ նշանակեցին…»: Իսկ նա պատասխանում է. «Որովհետև քո բոլոր խելացի գործընկերներին գնդակահարել էին…»: Կարծես թե ես եմ գնդակահարել…
Հեռախոսը զնգաց:
– Ես եմ,- ասաց Տեպպեն:- Շա՛տ լավ:
Հետո անցավ էստոներենի: Խոսքը սանտիմետրերի ու կիլոգրամների մասին էր:
– Ահա,- ասաց նա,- իններորդ պալատինն է ծննդաբերել: Չորս ու երկու հարյուր և հիսունութ սանտիմետր: Ուզո՞ւմ եք տեսնել:
– Պարտադիր չէ: Բոլոր երեխաներն իրար նման են…
– Մոր ազգանունն Օկաս է: Հիլյա Օկաս; Հազար ինը հարյուր քառասունվեց թվի ծնված: Նորմավորող է «Պունանէ ռէէտում»: Հայրը՝ Մագաբչա…
– Ի՞նչ Մագաբչա:
– Ազգանուն է: Եթովպիայից է: Ծովագնացության դպրոցում է սովորում:
– Սև՞ է:
– Կասեի՝ շոկոլադագույն:
– Լսեք,- ասում եմ,- բայց հետաքրքիր է: Ինտերնացիոնալիզմ է ուրվագծվում: Ժողովուրդների բարեկամության պես մի բան… Գրանցվա՞ծ են:
– Իհարկե: Ամեն օր կնոջը նամակ է ուղարկում ու ստորագրում է «Քո՝ սոյայի շոկոլադիկ»:
– Կարո՞ղ եմ զանգել:
– Շնորհ արեք:
Զանգում եմ խմբագրություն: Հեռախոսին մոտենում է Տուրոնոկը:
– Լսում եմ… Տուրոնոկն է:
– Հենրի՛խ Ֆրանցևիչ, հենց նոր տղա ծնվեց:

– Ի՞նչ: Ո՞վ է խոսում:
– Դովլաթովն է: Ծննդատնից: Հանձնարարություն էիք տվել…
– Հա՛, հիշում եմ: Հիշում եմ:
– Ահա, ուրեմն, տղա է ծնվել: Խոշոր, առողջ… Հիսունութ սանտիմետր: Քաշը՝ չորս ու երկուհարյուր… Հայրը եթովպացի է:
Ճնշող լռություն տիրեց:
– Չհասկացա,- ասաց Տուրոնոկը:
– Եթովպացի է,- ասում եմ,- ծնունդով Եթովպիայից… Սովորում է էստեղ… Մարքսիստ է,- չգիտես ինչու ավելացրի ես:
– Հարբա՞ծ եք,- կտրեց Տուրոնոկը:
– Ի՛նչ հարբած: Ախր գործի մեջ եմ:
– Գործի մե՛ջ… Դա ձեզ ե՞րբ է խանգարել: Դեկտեմբերին ո՞վ սիրտ թափեց շրջանային կուսակտիվի ժողովին…
– Հենրի՛խ Ֆրանցևիչ, հեռախոսը երկար զբաղեցնել չեմ կարող… Հենց նոր տղա է ծնվել… Հայրը բարեկամական եթովպացի է:
– Ուզում եք ասել՝ սև՞ է:
– Շոկոլադագույն:
– Այսինքն՝ նե՞գր:
– Բնականաբար:
– Էդտեղ ի՞նչն է բնական:
– Ձեր կարծիքով եթովպացին մարդ չի՞:
– Դովլա՛թով,- տառապագին ձայնով ասաց Տուրոնոկը:- Դովլա՛թով, ես ձեզ կազատեմ… Այդպես էլ կգրեմ՝ ամենայն լավագույնը վարկաբեկելու համար… Հանգիստ թողեք ձեր քաքոտ եթովպացուն: Սպասեք նորմալ, լսո՞ւմ եք, նորմալ մարդկային երեխայի…
– Լա՛վ,-ասում եմ,- ընդամենը հարցրի…
Ընկալուչի մեջ ընդհատ հնչյուններ լսվեցին: Տեպպեն ցավակցաբար ինձ էր նայում:
– Հարմար չի,- ասում եմ:
– Հենց սկզբից կասկածներ ունեի, բայց բան չասեցի: Որոշեցի չմիջամտել:
– Ինչ որ է…
– Սուրճ կխմե՞ք
Նա պահարանից հանեց դարչնագույն տուփը: Հեռախոսը նորից զնգաց:

Տեպպեն նորից էստոներեն խոսեց: Ըստ երևույթին խոսքն ինձ չվերաբերող գործի մասին էր: Սպասեցի խոսակցության ավարտին ու անսպասելի հարցրի.
– Կարելի՞ է քնել ձեր շիրմայի հետևը:
– Իհարկե,- չզարմացավ Տեպպեն:- Թիկնոցս կուզե՞ք:
– Առանց դրա էլ կլինի:
Հանեցի կոշիկներս ու պառկեցի: Պետք էր կենտրոնանալ: Թե չէ իրականության ուրվագծերն անդառնալիորեն աղոտանում էին: Հանկարծ ինձ տեսա հեռվից՝ մոլորված ու անհեթեթ: Ո՞վ եմ: Ինչո՞ւ եմ այստեղ: Ի՞նչ եմ պառկել շիրմայի հետևը, Աստված գիտի՝ ինչի սպասելով: Ա՛խ, ինչ ապուշ դասավորվեց կյանքը…
Երբ արթնացա, Տեպպեն կանգնել էր գլխավերևս:
– Կներեք՝ անհանգստացրի… Հենց նոր ձեր ծանոթուհին ծննդաբերեց: «Մարինա՞ն»՝ համարյա սարսափով մտածեցի ես: (Բոլորը գիտեն, որ միայն համարյա կարելի է սարսափել): Հետո, խելագար միտքը վանելով, հարցրի.
– Ի՞նչ ծանոթուհի:
– Երիտասարդական թերթի լրագրողուհին՝ Ռումյանցևան:
– Հա՛, Լենան, Բորյա Շտեյնի կինը: Իսկապես, մայիսից չէր երևում…
– Հինգ րոպե առաջ ծննդաբերեց:
– Հետաքրքիր է: Խմբագիրը երջանիկ կլինի: Երեխայի հայրը հայտնի պոետ է, մայրը՝ լրագրող: Երկուսն էլ՝ կուսակցական: Շտեյնը բալլադ կգրի այդ առիթով…
– Շատ ուրախ եմ ձեզ համար:
Զանգեցի Շտեյնին:
– Քեզ,- ասում եմ,- կարելի է շնորհավորել…
– Շուտ է: Պատասխանը չորեքշաբթի կլինի:
– Ի՞նչ պատասխան:
– Գնում ե՞մ Շվեյցարիա, թե՝ չեմ գնում: Ասում են՝ կապերկրներ ուղևորության փորձ չունես: Որ չեն թողնում՝ որտեղի՞ց լինի… Դու կապերկրներում եղե՞լ ես:
– Չէ: Ինձ սոցերկրներ էլ չեն թողում: Նույնիսկ Բուլղարիայում չեմ եղել:
– Իսկ ես նույնիսկ Հարավսլավիայում եմ եղել: Հարավսլավիան համարյա կապերկիր է…
– Հիվանդանոցից եմ զանգում: Տղա ես ունեցել:
– Քո՛ւ մերը,- գոռաց Շտեյնը:- Քո՛ւ մերը…

Տեպպեն չանչերով գրոտած մի թերթիկ տվեց:
– Հասակը,- ասում եմ,- հիսունվեց, քաշը՝ երեք ու ինը հարյուր: Լենան լավ է:
– Քո՛ւ մերը,- չէր հանդարտվում Շտեյնը,- գալիս եմ: Հիմա տաքսի կբռնեմ…
Արդեն պետք էր կանչել լուսանկարչին:
– Զանգե՛ք, զանգե՛ք,- ասաց Տեպպեն:
Զանգեցի Ժբանկովին: Հեռախոսը վերցրեց Լերան:
– Միխայիլ Վլադիմիրովիչն անառողջ է,- ասաց նա:
– Հարբած է, հա՞,- հարցնում եմ;
– Խոզի պես: Դու ե՞ս խմացրել:
– Ոչ մի դեպքում: Եվ ընդհանրապես, ես գործի եմ:
– Լավ, կներե՛ս:
Զանգում եմ Մալկիէլին:
– Արի՛,- ասում եմ,- երեխա ես նկարելու հոբելյանական թողարկման համար:
Շտեյնը տղա է ունեցել: Հոնորարն, ի դեպ, կրկնակի է…
– Գրելու ե՞ս էդ երեխայի մասին:
– Ի՞նչ կա որ:
– Էն կա, որ Շտեյնը հրեա է: Իսկ հրեաներին պետք է համաձայնեցնել:
Աներևակայելի միամիտ ես, Սե՛րժ:
– Կապլանի մասին գրեցի ու՝ առանց համաձայնեցնելու:
– Հիմա Գլիկմանի մասին էլ կասես: Կապլանը փաստորեն հրեա չի: Կապլանը մարզկոմի բյուրոյի անդամ է: Նրա մասին երկու հարյուր անգամ գրել են:
Կապլանին Շտեյնի հետ չխառնես:
– Չեմ էլ խառնում: Շտեյնը շա՛տ ավելի համակրելի է:
– Ավելի վատ նրա համար:
– Պարզ է: Շնորհակալ եմ, որ զգուշացրիր:
Տեպպեին ասում եմ.
– Պարզվում է՝ Շտեյնն էլ հարմար չի:
– Կասկածներ ունեի:
– Հարց է ծագում՝ իսկ ո՞վ ինձ արթնացրեց:
– Ես արթնացրի: Բայց կասկածները կային:
– Ի՞նչ անենք:
– Շուտով մեկն էլ կծննդաբերի: Գուցե և արդեն… Հիմա կզանգեմ:
– Իսկ ես դուրս գամ մի քիչ քայլեմ…

Տրտում հիվանդանոցային այգում կատուներ էին շրջում: Սուր ճռնչում էին տերևաթափ սև բարդիները: Մի նիհար, կորամեջք տղա դղրդոցով գլորում էր բաքով ձեռնասայլակը: Լվանալուց խունացած երկնագույն խալաթով՝ պառավ կնոջ էր նման:
Շրջադարձից հայտնվեց Շտեյնը:
– Դե՛, շնորհավորում եմ:
– Շնորհակալ եմ, ծերո՛ւկ, շնորհակա՛լ եմ: Հենց նոր Լենկային ուտելիք ուղարկեցի: Մի տեսակ անսովոր վիճակ է: Պիտի խմվի էս առիթով:
Կխմվի քեզ հետ,- մտածում եմ,- բա չէ՞… Թթվի վրաներս…:
Չէի ուզում վշտացնել: Չասացի, որ երեխան խոտանվել է: Բայց Շտեյնն արդեն գիտեր:
– Հոբելյանական նյո՞ւթ ես պատրաստում:
– Փորձում եմ:
– Ուզում ես ինձ ու Լենկային փառաբանե՞ս:
– Գիտե՞ս,- ասում եմ,- էստեղ բանվորա-գյուղացիական ընտանիք է պետք, իսկ դուք ազնվականներ եք:
– Ափսո՛ս: Ես էլ տաքսու մեջ արդեն բանաստեղծություն էի գրել: Էսպես է վերջանում.

Ֆաբրիկաներում, հանքախորշերում,
Մոլորակներում անհասանելի
Չորս հարյուր հազար հերոսներ կան արդ,
Ու նրանց շարքում՝ առաջնեկը իմ…

Ասում եմ.
– Ի՞նչ առաջնեկ: Արդեն հասուն աղջիկ ունես:
– Աղջիկս առաջին ամուսնությունից է:
– Հա՛,- ասում եմ,- ուրեմն ամեն ինչ կարգին է:
Շտեյնը միտք արեց ու հանկարծ ասաց.
– Ուրեմն հակասեմիտականություն, համենայնդեպս, գոյություն ունի:
– Կարծես թե:
– Ինչպե՞ս կարող էր հայտնվել մեզ մոտ: Մեր երկրում, որտեղ, թվում է…
Ես ընդհատեցի.

– Երկրում, որտեղ հիմնական մեռելը դեռ թաղված չի… Երկրում, որի անունն իսկ սուտ է…
– Քո կարծիքով՝ ամեն ինչ սուտ է:
– Ամե՛ն ինչ: Իմ ժուռնալիստիկան ու քո քոսոտ ոտանավորներն էլ սուտ են: Ե՞րբ ես տիեզերքում էստոնացի տեսել…
– Ախր փոխաբերությո՛ւն է…
– Փոխաբերությո՛ւն… Սուտը տասնյակ էդպիսի ընդհատակյա մականուններ ունի:
– Կարելի է կարծել՝ միակ ազնիվը դու ես: Իսկ ո՞վ մի ամբողջ վիպակ գրեց ԲԱՄ-ի մասին: Ո՞վ էր փառաբանում չեկիստ Տիմոֆեևին: Ո՞վ էր ռեպորտաժ վարում փետրվարյան պլենումից…
– Կթողեմ էս գործը: Կտեսնես՝ կթողեմ…
– Էդ ժամանակ էլ ուրիշներին երեսով տուր:
– Մի՛ ջղայնացի:
– Գրո՛ղը տանի, տրամադրությունս ընկավ… Բարո՛վ մնաս:

Տեպպեն ինձ դիմավորեց շեմին:
– Կուզինան է ծննդաբերել, վեցերորդ սենյակից: Ահա տվյալները: Էստոնուհի է, ավտոսայլակի վարորդ: Ամուսինը խառատ է, նավաշինական գործարանից, ռուս, ՍՄԿԿ անդամ: Երեխան՝ նորմայի սահմաններում:
– Փառք Աստծու, կարծես բռնում է: Համենայնդեպս զանգեմ:
Տուրոնոկն ասաց.
– Հրաշալի է: Պայմանավորվեք, որ երեխայի անունը Լեմբիտ դնեն:
– Հենրի՛խ Ֆրանցևիչ,- մրմնջացի ես,- ո՞վ իր երեխայի անունը Լեմբիտ կդնի: Ախր շատ հնաոճ է: Բանահյուսական…
– Թող դնեն: Իրենց համար ի՞նչ տարբերություն: Լեմբիտը լավ, առնական ու խորհրդանշական է հնչում… Հոբելյանական համարում կնայվի:
– Դուք ձեր երեխային Ելպիդիֆոր կանվանեի՞ք: Կամ Բովա:
– Դեմագոգիա մի արեք: Ձեզ հանձնարարություն է տրվել: Չորեքշաբթի նյութը պիտի պատրաստ լինի: Եթե երեխային Լեմբիտ անվանելուց հրաժարվեն՝ փող խոստացեք:
– Ինչքա՞ն:
– Քսանհինգ ռուբլի: Լուսանկարիչ ես կուղարկեմ: Նորածնի ազգանունն ի՞նչ է:

Ովքե՞ն են ծնողները: Հուսամ՝ սովորական սովետական մարդի՞կ են
– Ազգանունը Կուզին է: Մայրը էստոնուհի է, հայրիկը՝ ռուս…
– Լեմբիտ Կուզին: Հրաշալի է հնչում: Գործե՛ք:
Տեպպեին հարցրի.
– Հորն ինչպե՞ս գտնեմ:
– Է՛ն է: Պատուհանի տակ: Նստել է սիգամարգին:
Իջա ներքև:
– Ողջո՛ւյն,- ասում եմ,- դուք Կուզի՞նն եք:
– Կուզինը Կուզինն եմ,- ասաց,- բայց մե՞ջն ինչ:
Ըստ երևույթին ընկեր Կուզինի տրամադրությունը փիլիսոփայական էր:
– Թույլ տվեք,- ասում եմ,- շնորհավորել: Ձեր երեխան քաղաքի չորս հարյուր հազարերորդ բնակիչն է: Ես խմբագրությունից եմ: Ուզում եմ գրել ձեր ընտանիքի մասին:
– Ինչ կա գրելո՞ւ որ…
– Դե, ձեր կյանքի մասին…
– Ինչ կա որ, վատ չենք ապրում… Աշխատում ենք ոնց որ կարգն է… Մեր մտահորիզոնն ենք ընդլայնում… Հեղինակություն ենք վայելում, բո՛զը…
– Գուցե մտնենք մի տեղ, հանգիստ պայմաններում զրուցենք:
– Ասելդ էն է՝ մի-մի հատ գցե՞նք,- աշխուժացավ Կուզինը…
Բարձրահասակ, գրանիտե ծնոտով ու մանկական թարթիչներով մարդ էր: Արագ վեր կացավ սիգամարգից, թափ տվեց ծնկները:
Մտանք «Կոսմոս», նստեցինք պատուհանի տակ: Սրահը դեռ լիքը չէր:
– Փողը՝ ութ ռուբլի,- ասաց Կուզինը,- գումարած մի շիշ թույն…
Նա պայուսակից մի շիշ Կուբայի ռոմ հանեց: Քողարկեց վարագույրով:
– Ձևի համար երեք հարյուր գրամ վերցնե՞նք:
– Ու գարեջուր,- ասում եմ,- եթե սառն է…
Երեք հարյուր գրամ օղի պատվիրեցինք, երկու աղցան ու մեկական կոտլետ:
– Ապխտամիս կցանկանայի՞ք,- հարցրեց մատուցողը:
– Արդեն լեզվիդ ես տալիս,- արձագանքեց Կուզինը:
Սրահն ամայի էր: Բեմի բարձունքին տեղավորվել էին չորս երաժիշտ: Ռոյալը, կիթառը, կոնտրաբասն ու հարվածայինները: Կաղնեփայտե նոտակալները զարդարված էին թիթեղյա քնարներով:
Կիթառահարը թաշկինակով գողտուկ սրբեց կոշիկները: Հետո մոտեցավ

խոսափողին ու հայտարարեց.
– Առողջարանային Ազալեմմայից վերադարձած մեր ընկերների պատվերով…
Նա բազմանշանակ դադար տվեց:
– Կատարվում է «Անձրևը կաթում է դնչիս» քնարական երգը…
Աներևակայելի, բարձրախոսներում բազմապատկված դղրդոց լսվեց:
Երաժիշտները խմբովի ինչ-որ բան էին գոռում:
– Գիտե՞ս ինչ է Ազալեմման,- աշխուժացավ նորածանոթս,- լսի՛: Ազալեմման Էստոնիայի ամենամեծ ճամբարային ավանն է: Ուղղիչ-աշխատանքային ճամբար, կալանառաքում, ներքին բանտ… Լա՛վ, գնացի՛նք…
Նա բարձրացրեց բաժակը: Ես էլ:
– Կենա՛ցդ: Որդո՛ւդ կենացը:
– Հանդիպման համար: Ու որ վերջինը չլինի…
Երկու զույգ ինքնամփոփ պարում էին սեղանների արանքում: Սևուսպիտակ հագուստներով մատուցողներն ասես պինգվիններ լինեին:
– Ջխտե՞նք:
Նորից խմեցինք:
Կուզինը արագ մի բան ծամեց ու սկսեց.
– Որ ասեմ ոնց եղավ՝ մաքուր թատրոն: Նավամեխանիկականում էի աշխատում, մենակ էի: Ծանոթացա էդ կնկա հետ, ինքն էլ էր մենակ: Չեմ ասի, թե այլանդակ էր, մի տեսակ ուրիշ էր՝ իրա մտքերի հետ: Սկսեց գնալ-գալ, ոնց ասած՝ լվանալ, արդուկել… Ջատիկին միացանք… Չէ, Աստվածածնի տոնին… Թե չէ, գործից հետո վակուում էր…
– Ի՞նչ էր,- չհասկացա ես:
– Վակուում,- բացատրեց Կուզինը,- դատարկություն… Մարդ ինչքա՞ն կարա լակի… Մի տարվա չափ ապրեցինք… Ու թե ոնց էրեխով մնաց՝ չեմ հասկանում… Կպառկեր ոնց որ ձողաձուկը: «Հո չե՞ս քնել»՝ հարցնում եմ: -«Չէ,- ասում է,- ամեն ինչ լսում եմ»: -«Մեջդ հեչ կրակ չկա»,- ասում եմ: Իսկ նա. «Ոնց որ թե խոհանոցում լույսը վառ է մնացել…»: -«Ինչի՞ց իմացար…»: -«Տես, հաշվիչը ոնց է աշխատում…»: -«Լավ կլիներ,- ասում եմ,- նրանից սովորեիր…»: Էդպես էլ մի տարի ապրեցինք…
Կուզինը վարագույրի հետևից հանեց ռոմի շիշը, թեքեց՝ հրավիրելով: Նորից խմեցինք:
Կիթառահարը ձգեց-շտկեց պիջակն ու գոռաց.

– Տոլիկ Բ.-ի պատվերով, որ նստած է դռան մոտ, կատարվում է…
Դադար: Հետո՝ ավելի ոգեշունչ շեշտադրումով.
– Կատարվում է «Էս ի՞նչ թույն տվիր…» քնարական երգը:
– Իսկ դու ամուսնացա՞ծ ես,- հետաքրքրվեց Կուզինը:
– Եղել եմ:
– Բա հիմա՞:
– Հիմա՝ ոնց որ թե չէ:
– Երեխաներ ունե՞ս:
– Ունեմ:
– Շա՞տ:
– Շատ… Աղջիկս:
– Գուցե դեռ ամեն ինչ տե՞ղն ընկնի:
– Դժվա՛ր…
– Էրեխեքն են մեղք: Էրեխեքն, ախր, մեղք չունեն… Անձամբ ես նրանց կյանքի ծաղիկներ եմ կոչում… Մի-մի հատ է՞լ:
– Լցրու:
– Գարեջրով:
– Բնականաբար…
Գիտեի՝ էլի երեք բաժակ, ու՝ վերջ բոլոր գործերին: Այդ առումով, ինչպես Շաբլինսկին էր ասում, ճիշտը առավոտից խմելն է: Խմեցիր՝ ամբողջ օրն ազատ ես… Ոչ մի խնդիր… Բացարձա՛կ…
– Լսի՛,- ասում եմ,- տղայիդ անունը Լեմբիտ դիր:
– Ինչի՞ Լեմբիտ,- զարմացավ Կուզինը:- Վոլոդյա ենք ուզում, է: Ի՞նչ է էդ Լեմբիտը:
– Լեմբիտը անուն է:
– Ինչի՞, Վոլոդյան անուն չի՞:
– Լեմբիտը բանահյուսությունից է:
– Ի՞նչ է էդ բանահյուսությունը:
– Ժողովրդական ստեղծագործություն:
– Ի՞նչ կապ ունի ժողովրդական ստեղծագործությունը: Անձամբ ես իմ որդուն ուզում եմ Վոլոդյա կոչեմ… Ժառանգին անուն տալն էլ կարևոր է: Իմ անունն, օրինակ, Գրիշա են դրել, ու ի՞նչ դուրս էկավ: Մեծացա՝ ի՞նչ դառա: Հարբեցող… Թող հենց էդպես էլ դնեին՝ Հարբեցող… Մի հատ է՞լ:

Խմեցինք, արդեն առանց ծամելու:
– Անունը Վոլոդյա դնես,- բարբառում էր Կուզինը,- ուզվորի մեկը դառնա: Կամ հարիֆ… Շատ բան, իհարկե, դաստիարակությունից է կախված…
– Լսի՛,- ասում եմ,- անունը ժամանակավոր Լեմբիտ դիր: Մեր խմբագիրը դրա համար փող է խոստացել: Մի ամսից, որ գրանցելիս լինեք, անունը կփոխես…
– Ինչքա՞ն,- հետաքրքրվեց Կուզինը:
– Քսանհինգ ռուբլի:
– Երկու շիշ ու ծամելու: Եթե էստեղ…
– Առնվազն: Դու նստի, զանգեմ՝ գամ…
Իջա ավտոմատի մոտ: Զանգեցի հիմնարկ: Խմբագիրը տեղում էր:
– Հենրի՛խ Ֆրանցևիչ, ամեն ինչ օ’քեյ է: Հայրիկը կարծես պատրաստ է երեխային Լեմբիտ անվանել:
– Ձեր ձայնը մի տեսակ է,- ասաց Տուրոնոկը:
– Հեռախոսից է… Հենրի՛խ Ֆրանցևիչ, շտապ ուղարկեք Հուբերտին, փողն էլ հետը:
– Ի՞նչ փող: Ինչե՞ր եք հորինում:
– Ախր դուք առաջարկեցիք: Որպես խթան: Որ երեխայի անունը Լեմբիտ դնեն… Հայրը համաձայն է քսանհինգ ռուբլով: Հակառակ դեպքում, ասում է, Աբրահամ եմ դնելու…
– Դովլա՛թով, դուք հարբած եք,- ասաց Տուրոնոկը:
– Ոչ մի դեպքում:
– Լա՛վ, կպարզենք: Նյութը չորեքշաբթի պիտի պատրաստ լինի: Հուբերտը հինգ րոպեից դուրս է գալիս: Սպասեք Ռատուշայի հրապարակում: Բանալին կհանձնի ձեզ…
– Բանալի՞:
– Հա՛, խորհրդանշական բանալին: Երջանկության բանալին: Փոխանցեք հորը… Համապատասխան պայմաններում… Բանալին երեք ու ութսուն արժի: Քսանհինգ ռուբլուց կհանեմ:
– Ազնիվ չի,- ասացի ես:
Խմբագիրը դրեց խոսափողը:
Բարձրացա վերև: Կուզինը, գլուխը սփռոցին, ննջում էր: Այտի տակից շեղակի ցցվել էր հացի ափսեն:
Ձեռքս դրեցի ուսին:

– Է՛յ,- ասում եմ,- վեր կաց: Մեզ Հուբերտն է սպասում:
– Ի՞նչ,- իրար անցավ նա:- Հուբե՞րտ: Բա ասում էիր՝ Լեմբիտ:
– Լեմբիտն ինքը չի: Լեմբիտը քո տղան է: Ժամանակավոր… Իսկ Հուբերտը…
– Հա՛, տղա եմ ունեցել…
– Անունը Լեմբիտ է: Իսկ Հուբերտը…
– Սկզբում Լեմբիտ, հետո՝ Վոլոդյա:
– Իսկ Հուբերտը մեզ փող է բերում:
– Փող ունենք,- ասաց Կուզինը,- ութ ռուբլի:
– Հաշիվը պիտի փակենք: Ո՞ւր է մատուցողը:
– Է՛յ: Ապխտամի՛ս, ո՞ւր ես,- գոռաց Կուզինը:
Հայտնվեց մատուցողը. շրթունքները տրտում սեղմված էին:
– Մի ջարդված ափսե:
– Ըհը,- ասաց Կուզինը,- ես եմ մռութով շխկացել սեղանին: Ինքն էլ ջարդվեց: Այսինքն՝ ափսեն: Ներո՛ղ…
Նա անհարմար զգալով՝ ծոցագրպանից հանեց փշուրները:
– Զուգարանում էլ փուստ եք տվել,- ավելացրեց մատուցողը,- պետք է ավելի ուշադիր անել…
– Գնացիր ստեղից,- անսպասելի բարկացավ Կուզինը:- Թե չէ քաչալդ կլաքեմ…
– Պարտականությունները կատարելիս խորհուրդ չէի տա: Էդպես կարելի է և բանտ ընկնել:
Փողը տվի մատուցողին:
– Կներեք,- ասում եմ,- ընկերս տղա է ունեցել: Տեսնում եք, սիրտը լցված է:
– Լակել եք՝ ձեզ քաղաքավարի պահեք,- նահանջեց մատուցողը:

Վճարեցինք ու դուրս եկանք: Ուղիղ անձրևի տակ: Հուբերտի մեքենան կանգնած էր Ռատուշայի մոտ: Նա ազդանշան տվեց ու բացեց դռնակը: Խցկվեցինք ներս:
– Ահա փողը,- ասաց Հուբերտը,- խմբագիրը վախենում է, որ խմելով կընկնես…
Մթության մեջ նրանից վերցրի թղթադրամներն ու մանրը: Հուբերտը մի ծանր տուփ տվեց:
– Է՞ս ինչ է:
– «Պսկովյան հուշանվեր»:
Բացեցի տուփը: Մեջը ոչ մեծ բալալայկայի չափի, նիկելած բանալի էր:
– Հա՛,- ասում եմ,- երջանկության բանալին:

Բացեցի դուռն ու բանալին շպրտեցի աղբարկղը: Հետո Հուբերտին ասացի .
– Արի խմենք:
– Ախր մեքենայով եմ:
– Մեքենան թող ու գնացինք:
– Դեռ խմբագրին պիտի տուն տանեմ:
– Թող ոտով գնա, ճարպոտ խոզը…
– Հասկանո՞ւմ ես, բնակարան են խոստացել: Էդ որ չլիներ…
– Ինձ մոտ կապրես,- ասաց Կուզինը,- իսկ կնկաս գյուղ կուղարկեմ:
Պսկովշչինա, Ուսոխի: Էնտեղ ամառվանից մարգարինի երես չեն տեսել…
– Գնացի, տղե՛րք, ուշանում եմ,- ասաց Հուբերտը…
Մենք նորից ելանք անձրևի տակ: «Աստորիա» ռեստորանի լուսամուտները շողշողում-կանչում էին: Լապտերը խավարից խլում էր դռան դիմացի գույնզգույն ջրափոսը…
Արժե՞ մանրամասն պատմել, թե ինչ եղավ հետո: Ինչպես ուղեկիցս ելավ բեմահարթակ ու գոռաց. «Ծախեցի՛ն Ռուսաստանը…»: Հետո էնպես խփեց բարապանին, որ գլխարկը թռավ պահախցիկ… Ու թե հետո մեզ ոնց տարավ միլիցիան… Ու ոնց բաց թողեցին իմ վկայականի շնորհիվ… Ու ոնց կորցրի նշումներով նոթատետրս… Իսկ հետո՝ նաև Կուզինին…

Արթնացա Մարինայի մոտ, կեսգիշերին: Սենյակը լցվել էր դժգույն մթնշաղով: Անտանելի բարձր թխկթխկում էր զարթուցիչը: Անուշադրի սպիրտի ու թաց հագուստի հոտ էր գալիս:
Շոշափեցի քունքիս ուռչող քերծվածքը:
Մարինան, տխուր ու մի քիչ սմքած, նստել էր կողքիս: Մեղմ շոյում էր գլուխս: Շոյում ու կրկնում էր.
– Խե՛ղճ տղա… Խե՛ղճ տղա… Խե՛ղճ տղա…
Ո՞ւմ է ասում, մտածում եմ, ո՞ւմ…